և Հրեշտակապետի վանաց յայտ առնեն լինել գործ այնմ դարու · սակայն վանք Փրկչին կորուսեալէ զառաջին հընութիւն իւր, զորոյ և լիցին բանք մեր յընթացս պատմութեան։

Իսկ Թագուհին Հեղինէ յետ կալոյ ժամանակս ինչ յերուսաղէմ և կատարելոյ զաստուածահաճոյ բարեգործութիւնս, և մատուցանելոյ զՔերմեռանդ աղօթս 'ի Տնօրինական տեղիս Քրիստոսի, դարձաւ առ որդին իւր 'ի Նիկոմիդեա, 'ի ճանապարհին ցուցեալ անթիւ բարիս յաղքատս և յեկեղեցիս, ուր և մեռաւ իսկ 'ի հասակի 80 ամաց, (327 կամ 328), խրատելով զորդին կալ մնալ յԱստուածպաշտութեան, եւ խնդրելով յԱստուծոյ զՆորհս վասն նորա։

Այն ինչ յանդ ելանէր չինութիւն Եկեղեցեացն Ս · Տեղեաց, Մակար (1) Հայրապետ Երուսաղէմի վախճանեալ թաղեցաւ անդ 'ի Սիօն, որոյ գերեզմանն ցարդ անյայտ մնաց, որպէս այլ Հայրապետաց և կալաւ զԱթոռն Մաքսիմոս։

Դարձաւ Արիոս յաքսորանաց՝ խաբեալ զկայսրն չողոմարար բանիւք եւ երկդիմի դաւանութեամբ։ Եւսեբիոս Նիկոմիդացի 'ի պատճառս տեսանելոյ զչինութիւն Տաճարին Ս · Յարութեան՝ եկն յԱնտիոք (330) · և ժողովով եպիսկոպոսաց կողման իւրոյ արկ զԵւստաթէոս եպիսկոպոս յԱթոռոյ, և ընդ նմա նզովեալ դատապարտեցան յաքսորս բազում երիցունք, սարկաւագունք և եպիսկոպոսունք։ Դատապարտեցաւ և Աթանաս 'ի ժողովին Տիւրոսի, զոր գումարեաց Եւսեբիոս Նիկոմիդացի · ընկեցաւ յԱթոռոյն եւ արգելաւ նմա դառնալ յԱղէքսանդրիա · իսկ Աթանաս

---

(1) Այն սա Մակար 'ի խնդրոյ Ս · Վրթանէսի Հայոց Հայրապետի առաքեաց Թղթով 8 կանոնական բանս սակս բարեկարգութեան Եկեղեցւոյն Հայոց։ Օրինակ Թղթոյն և կանոնական բանից աւանդի 'ի գիրս Յովհաննու խմբասիրի, որպէս յառաջ բերէ Հ · Մ · Զամչեան։ Սակայն Մակար վախճանի յամի 335 · իսկ Ս · Վրթանէս կալաւ զԱթոռն յամի 339 · կամ 342 · յորմէ երևի թէ Մակար ժամանակակից է Արիստակիսի և ոչ Վրթանէսի, և երկրաբան գտան 'ի ժողովն Նիկիոյ, ուստի կամ Մակար առաքեաց զայն առ Արիստակէս, և կամ յաջորդն Մակարայ առ Վրթանէս · թէպէտ չունիմք հակառակիչ աւանդութեանց նախնեաց մերոց։ Պատմ · Հայք · Ա · 422։